ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ԽԵԼԱՑԻ ԴԱՏԱՒՈՐ.

Ասի յառակայ, թէ Ռ. արք միմեանց յոյժ բարեկամք էին. և եղեալ գնացին 'ի ճանապարհորդութիւն. և մինն զենեալ 'ի վաճառոյնն՝ և միւսն շահեալ փարթամացաւ։ Դարձան և զայրն 'ի տունս իւրեանց. և եկեալ մնացան 'ի քաղաքն իւրեանց։ Ասէ աղքատ ընկերն ցհարուստն, թէ՝ եղբայր, շատ բարութիւն և սէր դիտեմ 'ի քեզանէ. նա՝ ամենեցուն զլուխն այս է՝ որ կու խնդրեմ 'ի քէն, այն 'ի վեր է քան զամենն. պարտ է, որ ինձ եղբայրութիւն անես. Ռ. սպիտակ 'ի փոխ տաս, որ տանիմ զիմ տան և իմ տղայոց պէտքն լնում, զայլ տարի յայսօրս զքո դրամն վճարեմ. այնպէս՝ դիտայիր՝ թէ զիմ արդայքն 'ի գերութենէ կու գնես և ազատես քո հոգւոյդ համար։ Իսկ նորա լուեալ զայս պարզմտութեամբ՝ ետ զՌ. դրամն խղճալով աղքատութեան նորա։ Եւ եղեալ 'ի տեղւոջէն եկին 'ի տունս իւրեանց։ Եւ իբրև լցաւ տարեդլուխն, երթեալ տուողն դրամին առ պարտականն և ասէ, տարի մի բոլոր եղաւ. հիմայ զիմ դրամն տուր, որ իմ տանն և իմ տղայոցն կարիքն անցուցանեմ։ Իսկ նորա պատասխանի տուեալ ասէ, ես քեզ դրամ չը պարտիմ։ Եւ յորժամ բռնադատեաց, յայնժամ ասէ ցնա, եկ՝ երթանք 'ի դատաւորն՝ որ դատաստան առնէ։ Եւ յորժամ եկին, հարցեալ դատաւորն զերկոքեանն՝ զոմն՝ առեր ես թէ ոչ, և զոմն թէ՝ վկայ ունիս։ Եւ իբրև դիտաց՝ թէ ոչ զիր կայ և ոչ վկայ 'ի մէջն. ասէ ցայրն որ զդրամն էր տուեալ, թէ՝ յայնտեղն՝ որ դրամն տվիր, մարդ կայր, զրաստ կայր, ձի կայր 'ի մօտներդ։ Ասէ տուողն դրամին, թէ՝ ոչ ինչ չկայր մօտ 'ի մեզ, վերն աստուած էր, 'ի վայր մեք երկոքեանս. սա ողոգանօք խընդրեաց, և ես խղճացի ավն. այժմ կու ուրանայ։ Ասէ դատաւորն, ի յայն տեղն ծառ կայր, թուփ կամ քար կայր, ի՞նչ տեղ է այն տեղն։ Ասէ դրամի տէրն, ոչ ծառ կայր և ոչ թուփ, լոկ քարատակ մի էր, նստանք անդ համարեցի զդրամն և տուի, և ելանք և եկանք 'ի միասին 'ի քաղաքս. դա 'ի յիւր տունն գնաց և ես յիմ տունն։ Ասէ դատաւորն ցդրամի տէրն, կարե՞ս զքարրն զայն բերել, կամ կոտրել ի յայն քարէն և նշան բերել։ Իսկ նորա 'ի դուրս վազեալ 'ի դրամին կսկծուն, թէ գնամ զայն քարն լծով բերեմ, կամ կոտրեմ և նշան բերեմ։ Եւ յորժամ գնաց, ասէ դատաւորն ցմիւսն որ 'ի մնան մնաց. թէ՝ կարէ՞ զայն քարն շարժել 'ի տեղւոյն, կամ կարէ՞ կոտրել։ Ասէ այրն՝ որ ուրանայր զդրամն, թէ՝ հազար լուծք լծէ, չկարէ զայն քարն շարժել 'ի տեղւոյն. և թէ՝ հազար քարադործ բերէ, չկարէ կտոր մի կոտրել, զի ապառաժ քար է։ Յայնժամ դարձուցեալ զայրն որ գնայր 'ի յետև քարին, և ասէ ցուրացող դրամին, թէ՝ գնա՛ տուր զիւր դրամն 'ի յինքն, զի դու եղար վկայ որ պարտիս. և այնպէս յամօթ եղեալ վճարեաց զպարտքն։

Յուցանէ առակս. թէ՝ դատաւորին պարտ է լինել, որ 'ի դատարանին անելք բանին՝ ելք գտանէ, որ զիրաւունքն Աստուծոյ չթիւրէ. ըստ որում ասէ սողոմոն, թէ՝ որ կարողն է և հանճարեղ, զառաջնորդութիւն ստասցի։

Աղո-Հոռֆեր. ԻՌ։